

ԿԱՐԳ

Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման, ստուգվողների եւ քննութեանների կազմակերպման ու վերաձևման

Ուսումնական գործընթացի բազմակողմանի, համալիր և ճկուն մեթոդների ներդրման, ուսանողների գիտելիքների գնահատման գործում առավել անաչառության և թափանցիկության նպատակով Եվրասիա միջազգային համալսարանում գործում է գիտելիքների ստուգման, գնահատման, քննությունների կազմակերպման և վերահանձնման հետևյալ կարգը:

Համաձայն կարգի բոլոր ուսանողների համար՝ տվյալ առարկայի գնահատման 100%-ը դասախոսը բաժանում է՝ ելնելով կառուցվածքային հետևյալ սանդղակից.

10%- ինքնուրույն աշխատանք /ռեֆերատ, կուրսային աշխատանք, ստուգողական, հետազոտական աշխատանքներ/:

20% -լսարանային ակտիվություն /ներկայություն, ակտիվություն/,

30% -միջանկյալ քննություն,

40% -վերջնական քննություն,

1. Ինքնուրույն աշխատանք.

1.1. Ինքնուրույն աշխատանքը սահմանվում է բակալավրիատի 1-7 կիսամյակներում և մագիստրատուրայի 1-3 կիսամյակներում ուսուցանվող բոլոր դասընթացներից:

1.2. Ինքնուրույն աշխատանքի ձևերն են՝ ռեֆերատները, զեկույցները, կուրսային աշխատանքները, հետազոտությունները, տնային հանձնարարականների ժամանակին կատարումը և այլն:

1.3. Ինքնուրույն աշխատանքի ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի որակը և տվյալ նյութի յուրացման աստիճանը, որը ստուգվում է հրապարակային պաշտպանություն կազմակերպելու միջոցով:

2. Լսարանային ակտիվություն.

2.1. Լսարանային ակտիվությունը ևս սահմանվում է բակալավրիատի 1-7 կիսամյակներում և մագիստրատուրայի 1-3 կիսամյակներում ուսուցանվող բոլոր դասընթացներից:

2.2. Լսարանային ակտիվությունը գնահատվում է՝ հաշվի առնելով տվյալ դասընթացին ուսանողի հաճախումները, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ ակտիվ մասնակցությունը:

3. Միջանկյալ քննություն.

3.1. Միջանկյալ քննությունը ուսանողի գիտելիքների վերահսկման ձև է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի բովանդակության մասամբ յուրացման վերահսկում, որն անց է կացվում յուրաքանչյուր ուսումնական առարկայից կիսամյակում մեկ անգամ՝ նախորոշված ձևով ու ժամանակացույցին համապատասխան:

3.2 Միջանկյալ քննությունն իրականացվում է տվյալ առարկայի միջանկյալ յուրացումը գնահատելու համար:

4. Վերջնական քննություն.

Վերջնական քննությունը ուսանողների գիտելիքների որակի վերահսկման ձև է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի բովանդակության ամբողջական յուրացման որակի ամբողջական վերահսկում, որն անց է կացվում ուսումնական կիսամյակի վերջում՝ համաձայն նախորոշված ձևերի և ժամանակացույցի, որոնք ամրագրված են ուսումնական առարկաների թեմատիկ և առարկայական ծրագրերում:

5. Բոլոր ուսանողները պետք է հանձնեն միջանկյալ և վերջնական քննություններ այն դասընթացներից, որոնք անցել են տվյալ կիսամյակի ընթացքում:

6. Միջանկյալ և վերջնական քննություններն անկացվում են գրավոր: Առարկաների առանձնահատկություններից ելնելով՝ ամբիոնի վարիչի և ռեկտորի թույլտվությամբ կարող են կազմակերպվել նաև բանավոր քննություններ:

7. Միջանկյալ և վերջնական քննությունների ցանկը և անցկացման ժամանակացույցն առաջարկում է ամբիոնը և հաստատում է Համալսարանի ռեկտորը:

8. Միջանկյալ և վերջնական քննությունների մասին ուսանողներին տեղեկացվում է կիսամյակի սկզբին: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական մաս:

9. Գրավոր միջանկյալ և վերջնական քննությունները անցկացնում է տվյալ ամբիոնի մեթոդիստը ժամանակացույցով սահմանված օրերին: Քննությունների անցկացման նկատմամբ հսկողությունը իրականացվում է ամբիոնի և ուսումնական մասի կողմից:

10. Բանավոր քննությունը անցկացվում է տվյալ դասընթացի դասախոսի կողմից: Հսկողությունը իրականացվում է ամբիոնի և ուսումնական մասի կողմից:

8. Դասընթացի ընդհանուր գնահատումը.

8.1. Համաձայն սույն կարգի՝ յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 100 միավորանոց համակարգով:

8.2. Դասընթացի ընդհանուր գնահատականի մեջ հաշվի են առնվում ուսանողի հաճախումները, գործնական և սեմինար պարապմունքներին նրա ակտիվությունը, միջանկյալ և վերջնական քննությունների կամ ստուգաբանքների արդյունքները:

8.3. Միջանկյալ և վերջնական քննությունները գնահատվում են 20 բալով, որից.
0-7 միավորին համապատասխանում է 2 (անբավարար) գնահատականը,
8 –12-ին՝ 3 (բավարար),
13 – 17-ին՝ 4 (լավ),
18 –20-ին՝ 5 (գերազանց):

8.4. Յուրաքանչյուր քննություն /ընթացիկ կամ ավարտական/ գնահատվում է առանձին:

8.5. Գրավոր քննության տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը պետք է համապատասխանի ընթացիկ քննությանը հատկացվող ժամանակահատվածին:

8.6. Ուսանողներին արդյունքների մասին տեղեկացնելուց և գրավոր աշխատանքներին ծանոթացնելուց հետո արդյունքներն ամփոփվում են քննական տեղեկագրերում:

8.7. Ուսանողն իրավունք ունի բողոքարկել գրավոր աշխատանքի գնահատականը գրավոր աշխատանքի անցկացումից 10 օրվա ընթացքում:

8.8. Յուրաքանչյուր գործոնից ուսանողի վաստակած միավորը որոշվում է հետևյալ օրինակին համապատասխան.

Գնահատման կարգին համապատասխան՝ միջանկյալ /Մ/ քննությանը եթե հատկացված է 30% և վերջնական /Վ/ քննությանը՝ 40%, իսկ ուսանողը դրանցից համապատասխանաբար ստացել է, օրինակ, 16 և 14 միավոր, ապա այդ գործոններից նա կվաստակի.

Մ $16 \cdot 0.3 = 4.8$ միավոր

Վ $14 \cdot 0.4 = 5.6$ միավոր 20-ից:

Յուրաքանչյուր առարկայի վերջնական քննության ավարտից հետո ուսանողի ստացած գնահատականը հաշվարկվում է ստորև բերված 100 բալանոց համակարգով, հետևյալ օրինակին համապատասխան.

ուսանողը, կիսամյակի վերջում օրինակ «Մասնագիտական ներածություն» առարկայից ստացել է հետևյալ գնահատականները.

- ռեֆերատից-1.5
- լսարանային ակտիվությունից- 0.4
- միջանկյալ քննությունից-4.8
- վերջնական քննությունից-5.6

Նրա ամփոփիչ գնահատականը հավասար կլինի $1.5+0.4+4.8+5.6=12.3$, որն էլ վերջում բազմապատկում ենք հինգով / $12.3 \cdot 5 = 61.5$ /, այսինքն նշված աղյուսակին համապատասխան՝ ուսանողի ռեյտինգային միավորը կլինի 62, տառային նշանակումը՝ B-, իսկ թվանշանը՝ 2.7:

Գնահատականը	Ռեյտինգային միավորը	Նշանակումը	Թվանշան
գերազանց	95-100	A+	4.0
	87-94	A	4.0
	81-86	A-	3.7
լավ	75-80	B+	3.3
	67-74	B	3.0
	61-66	B-	2.7
բավարար	55-60	C+	2.3
	46-54	C	2.0
	40-45	C-	1.7
Անբավարար	21-39	D	1.0
Կտրված/ չներկայացած	0-20	F	0
անավարտ	-	I	-
ստուգված	≥40	S	-
Չստուգված	<40	U	-

8.9. Ռեյտինգային միավորները ուսանողի աստիճանակարգման գլխավոր ցուցիչներն են: Ռեյտինգային միավորները նշվում են 0-ից մինչև 100, թվանշանները՝ 0-ից մինչև 4:

8.10. Տառային նշանակումները գործում են նյութը և գիտելիքները գնահատելու համար:

8.11. Որոշ դասընթացներ և կրթական մոդուլներ գնահատվում են S կամ U գնահատականներով: S-ը նշանակում է, որ ուսանողը հասել է առաջադիմության մի մակարդակի, որը դասախոսը ուսումնառության տվյալ մակարդակի համար համարում է բավարար (յուրացրել է նյութի առնվազն 40 տոկոսը): U գնահատականը նշանակվում է, երբ ուսանողը չի բավարարում այդ չափանիշները: Թե՛ S և թե՛ U գնահատականների դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, և դրանք չեն օգտագործվում ուսանողի միջին որակական գնահատականը հաշվարկելիս: S գնահատականի դեպքում ուսանողը վաստակում է տվյալ դասընթացին հատկացված կրեդիտները, իսկ U գնահատականի դեպքում՝ ոչ:

8.12. Ուսանողին «անավարտ» (I) գնահատական կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ ուսանողի աշխատանքի անավարտ մասը փոքր է, աշխատանքն անավարտ է դասախոսի համար ընդունելի պատճառներով, և ուսանողի ընթացիկ ակադեմիական առաջադիմությունը բարձր է: Անավարտության գնահատականը կարող է փոխարինվել դրական գնահատականով միայն այն դեպքում, երբ անավարտ աշխատանքը լրացվում է հաջորդող կիսամյակի ընթացքում: Վերահանձնված «Անավարտ» գնահատականը տեղեկագրերում ձևակերպվում է հետևյալ ձևով «I-B» կամ «I-C»:

8.13. Վերջին քննության գնահատականները հաշվվում են ուսանողի ՄՈԳ-ում:

9. Ստուգարքների կամ քննությունների վերահանձնում /լուծարք/.

9.1. Եթե ուսանողը որևէ դասընթացից ստացել է D, F կամ U գնահատական, նա սահմանված ժամկետում իրավունք ունի 1 անգամ վերահանձնել այդ քննությունը:

9.2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում ամբիոնում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3. Միջանկյալ քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

9.4. Հարգելի պատճառով միջանկյալ քննությանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ միջանկյալ քննությունն ընկած ժամանակահատվածում նախապես այն համաձայնեցնելով ամբիոնի հետ:

9.5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:

9.6. Եթե ուսանողը բոլոր գործոններից ստացել է դրական, իսկ միջանկյալ քննությունից անբավարար գնահատական և վերջնական գնահատականը նվազագույն 8-ի /20 միավորից կամ 40-ը 100 միավորից/ շեմը չի ապահովում, ապա ուսանողը լուծարքի շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա ամփոփիչ գնահատականը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը /40-ը/:

Օրինակ, եթե ուսանողի լսարանային ակտիվությունը գնահատվել է 8 միավոր, միջանկյալ քննությունից նա վաստակել է 4 միավոր, ինքնուրույն աշխատանքից 10 միավոր,

իսկ եզրափակիչ քննությունից 8 միավոր, ապա այդ դասընթացի ամփոփիչ միավորը կլինի՝ Ամփ. = 1.6 + 1.2 + 1 + 3.2 = 7, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը լուծարքի շրջանում վերահանձնում է դասընթացը ամբողջությամբ, սակայն նրա ամփոփիչ միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

9.7. Միայն եզրափակիչ քննությունից անբավարար գնահատական ստացած և այդ իսկ պատճառով ամփոփիչ գնահատականը նվազագույն միավորի 8-ի շեմը չապահոված ուսանողը լուծարքի շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը /առանց միջանկյալի բաժնի/:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 8 միավոր, միջանկյալ քննությունից նա վաստակել է 8 միավոր, ինքնուրույն աշխատանքից 10 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 4 միավոր, ապա այդ դասընթացի ամփոփիչ գնահատականը կլինի՝ Ամփ. = 1.6 + 2.4 + 1 + 1.6 = 6.6, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը լուծարքի շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը և ամփոփիչ գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 4 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 10, ապա 4 միավորը զրոյացվում է և փոխարենը գրանցվում է 10 միավորը, սակայն ամփոփիչ միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

9.10. Ուսումնառության առաջինից վեցերորդ յուրաքանչյուր մեկ կիսամյակում 2 դասընթաց չհանձնած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակել ուսումը հաջորդ կուրսում և միաժամանակ կրկնել դասընթացները: Կրկնվող դասընթացներից որևէ մեկից «անբավարար» գնահատական ստանալու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից: Երկուսից ավելի դասընթացներ չհանձնած ուսանողները հաջորդ կուրս կփոխադրվեն միայն դասընթացները կրկնելուց և հանձնելուց հետո:

9.11. Յոթերորդ կիսամյակում որևէ դասընթաց չհանձնած ուսանողը հեռացվում է համալսարանից:

9.12. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

10. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը: